# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## Բնակարանների և անհատական բնակելի տների ԷԱ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության սուբսիդավորվող վարկ

| | |
|---|---|
| Կրեդիտի արժույթ | ՀՀ դրամ |
| Կրեդիտի նպատակ | Բնակելի անշարժ գույքի վերանորոգում, բարելավում |
| Կրեդիտի տարեկան անվանական տոկոսադրույքի չափ, տեսակ | 14%<br>Տարեկան տոկոսադրույքը սուբսիդավորում է և վարկերը շահառուներին տրամադրվում են՝<br>• Սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում՝ 0% տոկոսադրույքով<br>• Սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում՝ 2% տոկոսադրույքով<br>• Սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում՝ 3% տոկոսադրույքով<br>• Երևան քաղաքում՝ 5% տոկոսադրույքով<br>Հաստատուն<br>*Լողացող տոկոսադրույք չի կիրառվում |
| Կրեդիտի տարեկան փաստացի տոկոսադրույքի չափ | *0% - 5.11%* |
| Անվանական և տարեկան փաստացի տոկոսադրույքների տարբերությունը | Ուշադրություն՝ վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հասցեում՝ www.kamurj.am: |
| Վարկերի տոկոսագումարի հաշվարկման կարգը | Հաշվարկման կարգի օրինակը տես՝ Հավելված 2<br>Ի գիտություն՝ տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ: |
| Ապահովագրություն | Վարկի տրամադրման պայման է հանդիսանում ապահովագրությունը: Ապահովագրության համար հիմք է ընդունվում գույքի վարկի գումարը: Ապահովագրությունն իրականացվում է վարկատուի համար ընդունելի ապահովագրողների ցանկից Վարկառուի կողմից ընտրված ապահովագրական ընկերության կողմից: Ցանկը կցվում է սույն պայմանագրին, որտեղ նշված են ապահովագրական ընկերությունների անվանումները, գտնվելու վայրերը և հեռախոսի համարները: Ընդ որում, ապահովագրավճարները կատարում է վարկառուն կամ գրավատուն:<br>ա) անշարժ գույքի ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br>բ) դժբախտ պատահարներից վարակառուի/համավարկառուների ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի նկատմամբ՝ համաձայն Ընկերության հետ համագործակցող |

| | |
|---|---|
| | կազմակերպությունների կողմից սահմանված սակագների և ԾՎՖԿ պահանջների:<br><br>Լրացուցիչ ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկան ապահովագրվում է ըստ անհրաժեշտության: |
| Ընկերության հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների ցանկ | 1. **«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Հյուսիսային պող., 10 շենք, տարածք 1<br>Հեռ.՝ (374 11) 56-04-04<br><br>2. **«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ**<br>Հասցե՝ ք. Երևան, Հյուսիսային պող., 1 շենք<br>Հեռ.՝ (374 10) 59-10-10, (374 10) 50-07-70<br><br>3. **«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության փող., 51, 53, տարածքներ 47, 48, 50<br>Հեռ.՝ (374 10) 59-21-21<br><br>4. **«Ռեսո» ԱՓԲԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Կոմիտասի պող., 62 շենք, №93-93/1<br>Հեռ.՝ (374 60) 27-57-57, (374 98) 56-07-97<br><br>5. **«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Արամի փող., 3 շենք<br>Հեռ.՝ (374 60) 54-00-00, (374 10) 58-00-00<br><br>6. **«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան փող., 10 շենք, տարածք 110<br>Հեռ.՝ (374 60) 50-00-60 |
| Գույքի շուկայական և լիկվիդացիոն արժեքների գնահատում | Վարկի տրամադրման պայման է հանդիսանում գրավադրվող գույքի շուկայական և լիկվիդացիոն արժեքների գնահատումը վարկատուի համար ընդունելի գնահատողների ցանկից Վարկառուի կողմից ընտրված գնահատող կազմակերպության կողմից: Ցանկը կցվում է սույն պայմանագրին, որտեղ նշված են գնահատող կազմակերպությունների անվանումները, գտնվելու վայրերը և հեռախոսի համարները: Ընդ որում, գնահատման համար սահմանված վճարները կատարում է վարկառուն կամ գրավատուն: |
| Ընկերության հետ համագործակցող գնահատող ընկերությունների ցանկ | 1. **«ԲԻԼԻՎ» ՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի պ. 9-14<br>Հեռ՝ (374 94) 22-11-11, (374 95) 22-01-10<br><br>2. **«ԳԱՌԴԻ» ՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Բաղրամյան 7, թիվ 4<br>Հեռ՝ (374 96) 52-05-90, (374 95) 52-05-90<br><br>3. **«Օլիվեր Գրուպ» ՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Թումանյան 8<br>Հեռ՝ (374 10) 54-27-40, (374 10) 54-27-50, (374 10) 54-27-60 |

| | |
|---|---|
| | **4. «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Երևան, Եկմալյան 1-ին փողոց 16<br>Հեռ՝ (374 10) 53-07-09, (374 10) 50-04-07, (374 10) 52-19-30<br><br>**5. «ԿԱԼԳԱՐԻ» ՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Կապան, Գարեգին Նժդեհ 14/1<br>Հեռ՝ (374 93) 00-93-08, (374 93) 19-03-91, (374 93) 60-09-76<br><br>**6. «Տրիվիում Էքսպերտ» ՍՊԸ**<br>Հասցե՝ ք.Կապան, Գարեգին Նժդեհ 14/1<br>Հեռ՝ (374 94) 78-90-90, (374 93) 00-93-08 |
| Կրեդիտառուի կողմից կատարվող և կրեդիտի մարմանն ուղղված վճարումները | Նոտարական վավերացում - 26,000 ՀՀ դրամ<br>Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում - 72,000 ՀՀ դրամ<br>Միասնական տեղեկանք - 10,800 ՀՀ դրամ<br>Գնահատում - 15,000 ՀՀ դրամ<br>Ապահովագրություն՝<br>✓ Գույքի ապահովագրություն- տարեկան 0.16% վարկի գումարի մնացորդի հիման վրա<br>✓ Դժբախտ պատահարներից ապահովագրություն- տարեկան 0.16% վարկի գումարի մնացորդի հիման վրա<br><br>**Լրացուցիչ բնակելի անշարժ գույքի գրավադրման դեպքում (յուրաքանչյուր գույքի մասով)՝**<br>Նոտարական վավերացում - 13,000 ՀՀ դրամ<br>Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում - 26,000 ՀՀ դրամ<br>Միասնական տեղեկանք - 10,800 ՀՀ դրամ<br>Գնահատում - 15,000 ՀՀ դրամ |
| Վճարներ, որոնք չեն ներառվում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ | Առկա չեն |
| Կրեդիտի գումար | Նվազագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ<br>Առավելագույնը՝ 10,000,000 ՀՀ դրամ<br><br>Բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգման համար առավելագույնը 7'000'000 ՀՀ դրամ<br>Անհատական բնակելի տան վերանորոգման համար առավելագույնը 10'000'000 ՀՀ դրամ |
| Տրամադրման եղանակը | Անկանխիկ |
| Կրեդիտի մարման ժամկետ | 84 ամիս |
| Կրեդիտի մասնակի կամ ամբողջական մարման դեպքում կիրառվող տույժեր | Առկա չեն |
| Կրեդիտի մասնակի կամ ամբողջությամբ ժամկետից շուտ մարման իրավունք | Վարկառուն իրավունք ունի վաղաժամկետ մարել Վարկը կամ դրա մի մասը, այդ թվում վերաֆինանսավորման միջոցով, որի դեպքում համամասնորեն նվազեցվում է կրեդիտավորման ընդհանուր ծախսը: Ընդ որում, վաղաժամկետ մարման դեպքում Վարկատուն Վարկառուի ընտրությամբ վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցնում է ամսական վճարումների չափը՝ թողնելով վարկի մարման ժամկետն անփոփոխ, կամ |

| | |
|---|---|
| | նվազեցնում է վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ: |
| Կիրառվող պատասխանատվության միջոցներ | Վարկառուի կողմից սույն պայմանագրով սահմանված վճարները (վարկի գումարը և տոկոսները) ժամանակին չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում, Վարկատուն իրավունք ունի հաշվարկել և Վարկառուից գանձել տուժանք՝ 0.12% (զրո ամբողջ տասներկու) տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ ուշացման (կամ ժամկետանց դառնալու) օրվանից 90 օրացուցային օր: |
| Կրեդիտի ապահովման միջոց | 1. Վերանորոգվող, բարելավվող անշարժ գույք, անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ բնակելի անշարժ գույքի գրավ<br>2. Անհրաժեշտության դեպքում ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն, շարժական գույք |
| Մարման եղանակ | 1. Անուիտետ (ամսական հավասարաչափ վճարներ)<br>2. Վարկի գումարի ամսական հավասարաչափ վճարներ |
| Կրեդիտի գումարի և ձեռքբերվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի առավելագույն հարաբերակցություն | 70% |
| Կրեդիտի տրամադրում արտոնյալ պայմաններով | Առկա չէ |
| Վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը կցվում է | Տես՝ Հավելված 1 |
| Կրեդիտառուի համար վարկի հասանելիությունը սահմանափակող պայմանները | 1. Հաճախորդի (Համավարկառուների)՝ նախորդ տասներկու ամիսների ընթացքում ժամկետանց օրերի հանրագումարը գերազանցում է 30 օրացույցային օրը,<br>2. Տարիքային սահմանափակում (դիմում հայտի ընդունման պահին՝ 18-60 տարեկան) և այլն |
| Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը | Ամբողջական փաթեթի ներկայացնելուց հետո՝ 7 աշխատանքային օր |
| Կրեդիտառուին որոշման մասին տեղեկացնելու ժամկետը | Ամբողջական փաթեթի ներկայացնելուց հետո՝ 7 աշխատանքային օր |
| Վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը | Գրավի իրավունքի պետական գրանցումից և ներկայացնելուց հետո՝ 2 աշխատանքային օր |
| Վարկ տրամադրելու դրական որոշման գործոնները և վարկի մերժման գործոնները: | Դրական<br>1. Եկամուտների կայուն մակարդակ,<br>2. Դրական վարկային պատմություն,<br>3. Ընդունելի գրավի առարկա և այլն:<br>Բացասական<br>1. Բացասական վարկային պատմություն,<br>2. Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում իրականությանը<br>3. Հաճախորդի վարկունակության գնահատման արդյունքները չեն բավարարում Ընկերության վարկավորման չափանիշներին և այլն: |

**Նախազգուշացում՝**

- Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել և Դուք կարող եք զրկվել Ձեր գույքի նկատմամբ իրավունքներից, եթե ժամանակին չկատարեք Ձեր վարկային պարտավորությունները,
- Ձեր կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամկետին չվճարելու դեպքում Ձեր մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում:

Գրավի (հիփոթեքի) պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով և դրանից ծագող իրավունքները ստանան պետական գրանցում՝ ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Ծառայության ամբողջական պայմաններին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.kamurj.am կամ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարով՝ (011) 27-00-00:

## *Հավելված 1*

| **Անշարժ գույքի վերանորոգման/բարելավման նպատակով վարկ ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկ** | |
|---|---|
| **Հաճախորդի ինքնությունը**[1] | • Անձնագրի (կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ), առկայության դեպքում նաև սոցիալական ապահովածության քարտի բնօրինակները և պատճենները<br>• Ամուսնության վկայականի պատճե, եթե այդպիսին կա,<br>• Երեխաների ծննդյան վկայականների պատճեններ, եթե անձնագրեր չկան<br>• Հաճախորդի հետ միասին ապրող անձանց թվաքանակի մասին պաշտոնական տեղեկանք **բնակության վայրից**<br>• Ընտանիքի անդամների անձնագրերի պատճեններ<br>• Հաճախորդի՝ ՀՀ Բանկերից մեկում բացված դրամային/դոլարային հաշվի պայմանագիր |
| **Տվյալներ եկամուտների մասին** | • Եկամուտների մասին տեղեկանք գործատուի կողմից[1]<br>• Երկրորդային եկամուտը հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում)<br>• Աշխատանքային գրքույկի և/կամ պայմանագրի, հրամանի պատճե, քարտային հաշվի քաղվածք, առկայության դեպքում<br><br>*Ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամտի դեպքում պահանջվող փաստաթղթեր*<br><br>Հիմնադիր փաստաթղթեր՝<br>• Կանոնադրություն (իրավաբանական անձի դեպքում)<br>• Տեղեկանք պետական ռեգիստրից ընկերության վերաբերյալ<br>• Բաժնետերերի ռեեստրից քաղվածք (բաժնետիրական ընկերությունների դեպքում)<br>• Պետական գրանցման վկայական<br>• ՀՎՀՀ<br>• Հաշվապահական հաշվեկշիռը՝ տվյալ պահի դրությամբ<br><br>Գործունեության վերաբերյալ փաստաթղթեր՝<br>• ՀՀ ՖՆ ՊԵԿ ներկայացված ֆինանսական հաշվետվություններ վերջին 12 ամսվա համար (Շահութահարկի հաշվարկ, ԱԱՀ հաշվարկ, Եկամտային հարկի հաշվարկ, Շրջանառության հարկի հաշվարկ և այլն),<br>• Տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ<br>• Տեղեկանք վերջին 12 ամսվա ընթացքում փաստացի ստացված եկամուտների և ծախսերի վերաբերյալ՝ ըստ ամիսների<br>• Տեղեկանք ապրանքանյութական պաշարների մնացորդի և դրանց շուկայական արժեքների վերաբերյալ<br>• Տեղեկանք հիմնական միջոցների և դրանց շուկայական արժեքների վերաբերյալ<br>• Հարկային մարմինների կողմից իրականացված ստուգման վերջին ակտ (առկայության դեպքում)<br>• Վերջին վեց ամիսների կտրվածքով կատարված գրառումներ (առկայության դեպքում)<br>• Լուսանկարներ ծավալվող գործունեության վերաբերյալ |

| | |
|---|---|
| **Վարկային պատմության մասին տվյալներ** | • Գործով և վերջին մեկ տարվա ընթացքում մարված բոլոր վարկային գործարքների **(ներառյալ ոսկու վարկեր, ապառիկներ, վարկային գծեր, այլ վարկեր)** մասին մանրամասն տվյալներ, ներառյալ վարկային, գրավի պայմանագրեր, վարկային հաշվից քաղվածք, մարման ժամանակացույց<br>• Վարկառուի և իր հետ Փոխկապակցված անձանց, Համավարկառուների, Երաշխավորների համաձայնությունը վարկային հարցում կատարելու վերաբերյալ |
| **Վերանորոգվող (գրավադրվող) անշարժ գույքի հետ կապված փաստաթղթեր** | • Սեփականության իրավունքի գրանցման վկայական<br>• Սեփականության իրավունքի ծագման հիմքեր, անհրաժեշտության դեպքում<br>• Սեփականատերերի (ամուսնու առկայության դեպքում՝ նաև ամուսնու) անձնագրերի, ամուսնության վկայականների պատճեններ<br>• ՀՀ ԿԱ կադաստրի ՊԿ կողմից տրամադրված գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք (ներկայացվում է վարկի տրամադրման դրական որոշման դեպքում)<br>• Գույքի գնահատման հաշվետվություն<br>• Լուսանկարներ<br>• Նախահաշիվ, որտեղ մատնանշված է կատարման վերջնաժամկետը և ստորագրված է հաճախորդի կողմից |
| • Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Ընկերությունը: | |

---

[1] Համավարկառուի կողմից նվազագույնը պետք է ներկայացվի անձնագրի պատճե, սոցիալական քարտի պատճե (առկայության դեպքում), եկամուտը հիմնավորող փաստաթղթեր

[1] Եկամուտների մասին տեղեկանքում պետք է նշվի վարկառուի/համավարկառուի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում և ամսեկան եկամտի չափը (համախառն կամ զուտ, ընդ որում զուտ եկամտի դեպքում պետք է տեղեկանքում համապատասխան նշում կատարվի): Այն դեպքում, երբ վարակռուն/համավարկառուն միևնույն ժամանակ հանդիսանում է տվյալ կազմակերպության հիմնադիրը և տնօրենը և ներկայացվում է տեղեկանք աշխատանքի վայրից, ապա այդ տեղեկանքը պետք է հավաստվի հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությամբ: Նախընտրելի է, որպեսզի եկամուտների մասին տեղեկանքը ստորագրված լինի ոչ միայն տնօրենի, այլ նաև մեկ այլ իրավասու անձի կողմից (գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի ղեկավար և այլն):

## *Հավելված 2*

Ենթադրենք Դուք վերցրել եք 8 մլն ՀՀ դրամ գումարի վարկ՝ գյուղական բնակավայրում Ձեր անհատական բնակելի տան վերանորոգման համար, 7 տարի ժամկետով: Տոկոսագումարները և վարկի գումարը կվճարեք յուրաքանչյուր ամիս: Անուիտետային մարման եղանակով վարկ ստանալու դեպքում, այս պարագայում, ամսական հետվճարի չափը կկազմի 102,140 ՀՀ դրամ: Տարեկան փաստացի տոկոսադրույքը նշված օրինակում կազմում է՝ 2,02%: